

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Հայագիտական կենտրոն	5
2. Քաղաքական հետազոտությունների կենտրոն	7
3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն	9
4. Ուսումնական կենտրոն	11
5. Հրատարակչական կենտրոն	13
6. Գործունեության ապահովման ծրագիր	15
7. Առաջարկություններ	19
Հավելված 1. Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	20
Հավելված 2. Քաղաքական հետազոտությունների կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	26
Հավելված 3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	31
Հավելված 4. «Նորավանք» ԳԿՀ 2010թ. ստացված ֆինանսական միջոցները և կատարված ծախսերը	34

2010 թվականին Հիմնադրամն իրականացրել է աշխատանքներ **Հայագիտական, Քաղաքական հետազոտությունների, Ուսումնական, Տեղեկատվական, Հրատարակչական** կենտրոնների և **Գործունեության ապահովման** ծրագրի շրջանակներում՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված պլանների և ռազմավարության:

Հրատարակումներ

2010թ. Հիմնադրամի կողմից հրատարակվել են 6 գիրք, 12 համար «21-րդ ԴԱԸ», 12 համար «Գլոբուս» հանդես (մանրամասն տե՛ս Հավելված 1 և 2):

Ընդհանուր առմամբ – 30 հրատարակում:

Հրապարակումներ

«Նորավանք»-ի աշխատակիցները հեղինակել են **165 տպագիր** աշխատանք, այդ թվում՝ 6 գիրք: ԶԼՄ-ին տրվել են մի քանի տասնյակ հարցազրույցներ:

Հիմնադրամի աշխատանքներին ներգրավված փորձագետների թիվը՝ **26:**

Կայք

2010թ. կայքէջի այցելուների ընդհանուր թիվը կազմում է **138.750**: Կայքէջ միջին այցելությունների թվաքանակը 2010թ. կազմել է **օրական 380 հոգի**, որը 1,3 անգամ ավելին է, քան 2009թ. և 2,2 անգամ ավելի, քան 2008թ.:

Գիտաժողովներ, սեմինարներ

Հիմնադրամի աշխատակիցները **16 գեկուցումներով հանդես են եկել 12 միջազգային գիտաժողովներում, հանդես են եկել մի շարք տեղական գիտաժողովներում:**

Ուսումնական կենտրոնն իրականացրել է **1 ամառային դպրոց և 20 սեմինար:**

Կապերը

Հիմնադրամը համագործակցում է ազգային, հասարակական և միջազգային կառույցների հետ: Դրանց թվում են ՀՀ Սփյուռքի նախարարությունը (համատեղ հրատարակվել է 3 գիրք), «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն (համատեղ հրատարակվել է 6 համար «Գլոբուս: Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» ամսագիր), Գիտության պետական կոմիտեն (համատեղ իրականացվել է 1 ամառային դպրոց և հրատարակվել է 1 գիրք), Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնը (Մոսկվա), որի հետ համատեղ իրագործվում է տվյալների շտեմարանի ձևավորում և on-line քննարկումներ, «Քաղաքակրթությունների երկխոսություն» կազմակերպության հետ (Վիեննա - Մոսկվա), ՀԿԵ-ն (ԻՕԿՋԸ), «Արևմտահայության համագումար» (WAC) միջազգային կազմակերպությունը (Ժնև), Սոցիալական գիտությունների ինստիտուտը (Մոսկվա), «Ահաբեկչական վտանգների ուսումնասիրման կենտրոնը», (Մոսկվա), Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի ինստիտուտը (Թեյ Ավիվ):

Աշխատակազմը

Հաստիքացուցակում ընդգրկված է **39 աշխատակից**, որոնք բաշխված են ըստ հետևյալ ոլորտների.

- հետազոտական-ուսումնական ոլորտում - **18 փորձագետ**, որոնցից 1-ը` գիտ. դոկտոր, 6-ը` գիտ. թեկնածու,
- տեղեկատվական-հրատարակչական ոլորտում - **9** մասնագետ, որոնց թվում` 1 գիտ. թեկնածու,
- վարչական- տնտեսական բաժնում – **5** աշխատակից,
- տեխնիկական աշխատակազմ (պահակային հերթափոխային ծառայություն, հավաքարարներ) – **7** աշխատակից:

1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Արեստակես Միմավորյան

Հայագիտական կենտրոնում աշխատում է 6 աշխատակից՝ Արեստակես Միմավորյան (կենտրոնի ղեկավար), փորձագետներ Ռուբեն Մելքոնյան, Թամարա Վարդանյան, Վահրամ Հովյան, Տիգրան Ղանալանյան, Էդուարդ Դանիելյան (խորհրդական): Հաշվետու ժամանակահատվածում Հայագիտական կենտրոնի աշխատակիցները և ներգրավված փորձագետները հեղինակել են թեմատիկ 91 աշխատանք, որոնցից 76-ը՝ կենտրոնի աշխատակիցների կողմից, մասնակցել 16 գիտաժողովների (Հավելված 1):

Կենտրոնն ակտիվորեն համագործակցում է Սփյուռքի նախարարության և ԵՊՀ-ի հետ:

Հայագիտական կենտրոնում աշխատանքներն իրականացվել են ըստ տարեսկզբին հաստատված աշխատանքային պլանի, հետևյալ ուղղություններով.

1. Կրոնափոխ (բռնի իսլամացված) հայության խնդիրների ուսումնասիրություն
2. Տարադավան (կաթոլիկ, բողոքական) հայության խնդիրների ուսումնասիրություն
3. Հայության նկատմամբ Կրաստանի էթնոքաղաքականության ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Թուրքիայի իսլամացված և ծպտյալ հայերի խնդրի ուսումնասիրությունը: Միևնույն ժամանակ, աշխատանքներ են կատարվել Եվրոպա տեղափոխված իսլամացված հայերի խնդրի խորքային ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես՝ ձեռք են բերվել և մշակվել մի քանի աղբյուրներ, կապեր են հաստատվել Հոլանդիայում և Գերմանիայում բնակվող կրոնադարձ հայերի հետ: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև ներկայումս Թուրքիայում ծպտյալ և իսլամացված հայերի ձևավորած հասարակական կազմակերպությունները և նրանց գործունեության ոլորտները:

Կաթոլիկ հայերի խնդիրների ուսումնասիրության շրջանակներում կատարվել է հետազոտություն՝ նվիրված Թուրքիայի, Ռուսաստանի և Լեհաստանի հայ կաթոլիկ համայնքների արդի խնդիրներին: Ուսումնասիրվել է հայ կաթոլիկներին վերաբերող համացանցային (մասնավորապես՝ անգլիալեզու) տեղեկատվությունը: Կազմվել է տեղեկատվական շտեմարան, որն ընդգրկում է ավելի քան 25 երկրների հայ կաթոլիկ համայնքներին վերաբերող ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր տեղեկատվություն:

Բողոքական հայերի խնդիրների ուսումնասիրությունը կատարվել է երկու հարթության մեջ՝ տեսական-հայեցակարգային և առանձին համայնքների ուսումնասիրության (case-study): Տեսական-հայեցակարգային հարթության մեջ տրվել է բողոքական հայերի ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրվել են նրանց ինքնընկալումները հայոց մեջ բողոքականության ծագումնաբանության և Հայության ճակատագրում բողոքական հայերի ունեցած դերի մասին: Առանձին համայնքների ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվել են Լիբանանի, Սիրիայի, Թուրքիայի, Իրանի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի և Կանադայի հայ բողոքական համայնքները:

Ուսումնասիրվել են նաև արդի հասարակությունում կրոնական հանդուրժողականության խնդիրները:

Ուսումնասիրվել են Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտի հիմնական գաղափարախոսական ուղղությունները (նեոօսմանիզմ, եվրասիականություն, պանթյուրքիզմ):

Ուսումնասիրվել է հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից, ինչպես նաև հայոց պետականության քաղաքակրթական արժեհամակարգը Արցախի ազատագրական պայքարում:

Աշխատանքներ են իրականացվել Վրաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխությունների, միալեռնիկացման գործընթացների, դրանց միտումների, արդյունքների, Հայաստան-Վրաստան հարաբերությունների և վիրահայության խնդիրների թեմատիկ ուղղությունների շուրջ: Հետազոտության են ենթարկվել երկլեզվյա կրթության առանձնահատկություններն ազգապահպանության հարցերի տեսանկյունից:

Աշխատանքներ են տարվել ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ «Հետխորհրդային տարածքի և Արևելյան Եվրոպայի հայկական համայնքներում տեղեկատվական և մշակութային ռեսուրսների ուսումնասիրություն» և «Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում» նախագծերի իրականացման ուղղությամբ:

Ուսումնասիրվել են ԱՄՆ-ի հայագիտական կենտրոնները, ինչպես նաև Հայության մտավոր ներուժը Հարավային Ռուսաստանում:

2011թ. աշխատանքային պլանները

2011թ. Հայագիտական կենտրոնը շարունակելու է ծրագրային հետազոտությունները: Ուսումնասիրությունները կատարվելու են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Քաղաքակրթական գործոնը Հայության դավանանքային շերտերում (կաթոլիկ և ավետարանական հայերի օրինակով), որի շրջանակներում դիտարկումները կկենտրոնացվեն պատմական, վիճակագրական և քաղաքակրթական խնդիրների վրա:
2. Բռնի իսլամացված հայության հիմնախնդիրները:
3. Հայկական համայնքների արդի վիճակը և զարգացման միտումները:
4. Թուրքական «ուղեղային կենտրոնների» գործունեության ուղղությունները:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Սևակ Սարուխանյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնում աշխատում է 4 փորձագետ՝ Սևակ Սարուխանյան, Կարեն Վերանյան, Արաքս Փաշայան և Սերգեյ Սարգսյան: Կենտրոնի աշխատակիցները 2010թ. հեղինակել են 61 հոդված, այդ թվում՝ 1 գիրք **(տե՛ս Հավելված 2)** և մասնակցել 9 միջազգային գիտաժողովի, որոնցից 4-ում հանդես են եկել զեկուցումներով:

Կենտրոնը համագործակցում է «ՀայՌուսագաղարդ» ՓԲԸ-ի, Իսրայելի բաց համալսարանի, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, Ահաբեկչական վտանգների ուսումնասիրման կենտրոնի, Սփյուռքի նախարարության, ՀԿԵ-ի (IOKЖД) և այլ հաստատությունների հետ:

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի 2010թ. աշխատանքներն իրականացվել են համաձայն 2010թ. աշխատանքների համար հաստատված ծրագրերի, որոնք ընդգրկում են հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

- Տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն
- Հայաստանը գլոբալ աշխարհում – վարկանիշային ուսումնասիրություն:

2010թ. աշխատանքների հիմնական արդյունքները

Տարածաշրջանային էներգետիկ անվտանգության ուղղություն

Հետազոտությունների հիմնական ուղվածությունն է եղել ՀՀ և տարածաշրջանային էներգետիկ նախագծերի զարգացման և իրականացման ընթացքի ուսումնասիրումը: Այս ուղղության շրջանակներում կատարվել են կարևոր հետազոտություններ, որոնցից են.

1. ՀՀ-ում միջուկային էներգետիկայի զարգացման հեռանկարները, ՀՀ-ում նոր միջուկային էներգետիկ ռեակտորի կառուցման կարևորությունը և դրանից բխող հնարավոր տարածաշրջանային զարգացումները:
2. Հայաստան-Իրան հարաբերությունների ակտուալ խնդիրները. կազմվել են առաջարկություններ երկու երկրների միջև համագործակցության ոլորտներին զարգացման նոր լիցք և բովանդակություն հաղորդելու վերաբերյալ:
3. Կասպիցի էներգակիրների շուրջ զարգացումները, այդ թվում դրանց հնարավոր ազդեցությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական անվտանգության վրա:
4. Զարգացումներն Իրանում և նրա շուրջ. դրանք դիտարկվել են որպես գործոններ, որոնք կարող են ազդել ՀՀ անվտանգության վրա:

Հայաստանը գլոբալ աշխարհում – վարկանիշային ուսումնասիրություն

Հետազոտությունների հիմնական ուղղվածություններն են եղել վարկանիշային հետազոտությունների ուսումնասիրությունները և ՀՀ-ի համար ակտուալ նշանակության քաղաքական հետազոտությունների իրականացումը: Այս ուղղության շրջանակներում կատարվել են կարևոր հետազոտություններ.

1. 2010-ին հրատարակվել է կենտրոնի փորձագետ Կարեն Վերանյանի «Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում» գիրքը, որում զետեղված են միջազգային վարկանիշային հեղինակավոր կենտրոնների կողմից կատարված հետազոտությունների ուսումնասիրությունը, այդ հետազոտությունների կազմման մեթոդաբանությունը, ինչպես նաև ՀՀ տեղը միջազգային վարկանիշներում՝ ըստ տարբեր ոլորտների և ուղղությունների:

2. Գրքի հրատարակումից հետո, հաշվի առնելով թեմայի կարևորությունը, «Հայաստանի միջազգային վարկանիշը» նախագծի շրջանակում շարունակվել է միջազգային վարկանիշային հետազոտություններում ՀՀ դիրքերի փոփոխման ուսումնասիրությունը:
3. Կատարվել է ուսումնասիրություն ԱՄՆ տարածքում լոբբինգի իրավաքաղաքական հիմքերի վերաբերյալ:

Էթնոդավանական խնդիրները Հարավային Կովկասում

Հետազոտությունների հիմնական ուղղվածություններն են եղել ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջանային էթնոդավանական գործընթացները: Այս ուղղության շրջանակներում ուսումնասիրվել է իսլամական գործոնի ակտիվացումն Ադրբեջանում և այն հասարակական-քաղաքական հետևանքները, որ կարող են ունենալ շիա-սուննի հակասություններն Ադրբեջանում:

2011թ. աշխատանքային պլանները

2011թ. Քաղաքական հետազոտությունների կենտրոնը շարունակելու է ծրագրային հետազոտությունները: Նախատեսվում է 2011-ի հետազոտությունները կենտրոնացնել հիմնական երեք ուղղություններում՝ ՀՀ և տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն, միջազգային ռազմավարական մշակումների ու գնահատականների ուսումնասիրություն և ռազմաքաղաքական զարգացումները տարածաշրջանում:

Նախատեսվում է շարունակել նաև վարկանիշային հետազոտությունները:

3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Գագիկ Հարությունյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնում աշխատում են 3 փորձագետ լրիվ դրույքով՝ Գագիկ Հարությունյան, Աննա Ժամակոչյան, Դիանա Գալստյան, և 4 փորձագետ կես դրույքով՝ Սոնա Մանուսյան, Սամվել Մարտիրոսյան, Մուրեն Մարտիրոսյան, Վարուժան Գեղամյան: Կենտրոնի աշխատանքների շրջանակներում 2010թ. ընթացքում լույս են տեսել 4 գիրք, 32 հետազոտություն, որից 24-ը հեղինակել են ՏՀ կենտրոնի փորձագետները, մյուս 8-ը՝ ՏՀ կենտրոնի հետ համագործակցող փորձագետները, ՏՀ կենտրոնի փորձագետները մասնակցել են 3 սեմինարի և 6 միջազգային գիտաժողովի, հանդես են եկել 12 զեկուցումներով (տե՛ս **Հավելված 3**):

ՏՀ կենտրոնի գործունեությունն ընթացել է տարեսկզբին հաստատված աշխատանքային պլաններին և նպատակային ուղղություններին համապատասխան:

1. Աջակցություն Հայության տեղեկատվական ցանցային կազմակերպման հարցերին

ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

- «Հայկական համայնքների ինքնության հարցերը և ռեսուրսները հետխորհրդային երկրներում»
- «Հարավային Ռուսաստանի հայությունը. ինքնակազմակերպման հարցեր»:

Առաջին հետազոտության շրջանակներում իրականացվել է հետխորհրդային երկրների հայ երիտասարդների ինքնության որոշ ասպեկտների, համայնքային պատկանելության զգացումի և սոցիալ-հոգեբանական այլ բնութագրիչների դաշտային ուսումնասիրություն՝ ներկայում ՀՀ-ում գտնվող ուսանողների հարցման, ինչպես նաև հեռակա հարցման եղանակով (հարցաթերթերի տարածում համացանցի միջոցով)՝ նախօրոք մշակված մեթոդաբանությամբ և հետազոտական գործիքներով: Արդյունքները վերլուծվել և ներկայացվել են աշխատանքում:

Ուսումնասիրվել են հետխորհրդային երկրների հայերի ներկայացվածությունը վիրտուալ սոցիալական ցանցերում՝ դիտարկելով նրանց հաղորդակցման լեզվի հարցերը, ֆորումների և բլոգների գործունեության նպատակները, վիրահայերի, չճանաչված հանրապետությունների հայերի, ռուսալեզու համշենահայության և այլ երկրների հայկական խմբերը ռուսալեզու *Odnoklassniki.ru*, *Vkontakte.ru* սոցիալական ցանցերում:

Առաջին հետազոտության մեջ ներառվել են նաև հետխորհրդային տարածքի հայկական ռեսուրսների շարունակական մոնիթորինգի և համեմատության արդյունքները, բացահայտված նոր ռեսուրսները և համալրված տեղեկատվական բազան:

Երկրորդ հետազոտությունն իրականացվել է «Նորավանք» ԳԿՀ-ի և ՌԴ փորձագետներ Տիգրան Թավադյանի ու Միխայիլ Սավվայի հետ համատեղ: Անդրադարձ է կատարվել Հարավային Ռուսաստանում հայերի վերաբնակեցման պատմությանը, ինքնակազմակերպման մակարդակին, Հարավային Ռուսաստանի հայերի մտավոր ներուժին, պատմական և գործող կրթական հաստատություններին, հայկական ֆինանսական ներկայությանը և այլ հարցերին:

Արդյունքում տպագրվել են հետևյալ գրքերը՝

- «Հայկական համայնքների ինքնության հարցերը և ռեսուրսները հետխորհրդային երկրներում»,
- «Հարավային Ռուսաստանի հայությունը. ինքնակազմակերպման հարցեր»:

Այս ուղղության շրջանակներում նաև նախապատրաստվել է Արևելյան Եվրոպայի երկրների հայ համայնքների տեղեկատվական ու կազմակերպչական ռեսուրսների ուսումնասիրությունը, որը նախատեսվում է հրատարակել 2011թ.: Այս աշխատանքի շրջանակներում հաշվադրվել են Արևելյան Եվրոպայի 6 երկրների հայկական համայնքային-մշակութային կառույցները և զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում՝ էլեկտրոնային: Իրականացվել է հետխորհրդային տարածքի և Արևելյան Եվրոպայի հայ համայնքների որոշ ակտիվ գործիչների հետ կապերի և համագործակցության հաստատում:

2. Հոգեբանական և տեղեկատվական անվտանգության խնդիրների ուսումնասիրություն և պաշտպանություն

«Մեր հաղթանակները» քառահատորի նախագծի շրջանակներում ավարտվել են երրորդ հատորի պատրաստման աշխատանքները, հատորը հանձնվել է հրատարակման:

Իրականացվել են հեռուստատեսային լրատվական թողարկումների մոնիթորինգի գործիքի մշակում, փորձարկում (լրատվական որոշ թողարկումների կողմնորոշում-մոնիթորինգ), աղբբեջանական հիմնական քարոզչական կայքերի մոնիթորինգ, աղբբեջանական 1 հեռուստաընկերության *չարունակական* մոնիթորինգ և տեսագրում, 4 հեռուստաընկերությունների լրատվական թողարկումների *ընտրանքային* մոնիթորինգ՝ տեսագրմամբ: Կատարվել են 2010թ. փետրվարի 23-26-ն ընկած ժամանակահատվածի աղբբեջանական 3 հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումների կողմնորոշում, Աղբբեջանի խոցելի կետերի մոնիթորինգ և ուսումնասիրություն: Այս աշխատանքների արդյունքները կներկայացվեն զեկուցագրերի և հոդվածների տեսքով:

Այս ուղղության շրջանակներում ուսումնասիրվել են համացանցի տեղեկատվական հոսքերում և գործիքներում արձանագրված արդի որակական փոփոխությունները, ինչը ենթադրում է նաև անվտանգության հարցերի հնարավոր վերանայում: Աշխատանքներ են տարվել նաև թուրքական բլոգոսֆերայի քանակական և որակական գնահատման ուղղությամբ, հավաքվել է բազա, որը վերլուծության կենթարկվի 2011թ.:

Կենտրոնի աշխատանքների շրջանակներում հրատարակվել է նաև Հայկարամ Նահապետյանի հեղինակած *«Թուրք-աղբբեջանական կառույցների հակահայ գործունեությունը»* հետազոտությունը:

2011թ. աշխատանքային պլանները

2011թ. նախատեսվում է իրականացնել *«ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրություն»* նախագիծը: Նախագծի նպատակը ՀՀ տեղեկատվական տարածքում շրջանառվող իդեոլոգեմների և արժեքների ցուցանիշների կազմումն է՝ Հայաստանի ավանդական և ցանցային մեդիաների բովանդակության վերլուծության և կարծիք ձևավորողների արժեքային կողմնորոշումների հետազոտման միջոցով: Հետազոտված մեդիաները կվարկանիշավորվեն ըստ Հայաստանի տեղեկատվական անվտանգության հայեցակարգի չափանիշների: Այդ տվյալները նաև հիմք կձառայեն ՀՀ պետական և ազգային կառույցների հետ համատեղ տեղեկատվական քաղաքականության ռազմավարության մշակման համար: Հետազոտությունը կիրականացվի նախապատրաստական, դաշտային աշխատանքների և վերլուծական փուլերով՝ 2 տարվա ընթացքում: Աշխատանքը կամփոփվի գրքի հրատարակմամբ:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան

2010թ. նախատեսված ուսումնական ծրագրի համաձայն, անցկացվել են «Նորավանք» ԳԿՀ ամառային դպրոց՝ «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» թեմայով, 20 սեմինար և գիտաժողով:

Ամառային դպրոցի ընթացքում 10 փորձագետ հանդես են եկել զեկուցումներով՝ անդրադառնալով ազգային անվտանգությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներին:

Հրատարակվել է Ամառային դպրոցի զեկուցումների ժողովածուն:

Դրանք հնարավորություն են տվել երիտասարդ մասնագետների, պետական ծառայողների, լրագրողների և այլ փորձագետների մեջ ձևավորել արդիական պատկերացումներ հասարակագիտական և քաղաքագիտական ոլորտների վերաբերյալ, մասնավորապես «Նորավանք» ԳԿՀ-ում ուսումնասիրվող թեմաների շուրջ:

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ կազմվել է «Միջուկային էներգետիկայի հեռանկարները Հայաստանում և ազգային ու տարածաշրջանային անվտանգությունը» թեմայով նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ 2011-2012թթ. թեմատիկ ֆինանսավորման հայտերի ընտրության մրցույթին:

Կատարվել են աշխատանքեր 2011թ. հոլանդական «Springer» էլեկտրոնային գրադարանների ցանցին միանալու համար:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2010թ. անցկացված սեմինարների և գիտաժողովների ցանկ

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
1.	«Քանակական և որակական գնահատման մեթոդները» թեմայով սեմինար	Վարդան Սահակյան, ՀՀ ԳՊԿ
2.	«Ատոմային էներգետիկայի հեռանկարները Հայաստանում» թեմայով սեմինար	Սևակ Սարուխանյան
3.	«Հայոց Մեծ եղեռնի» թեմայով սեմինար-քննարկում	Գագիկ Հարությունյան
4.	«Հարավային Ռուսաստանի հայերի կազմակերպման խնդիրները» թեմայով սեմինար	Տիգրան Թավադյան, «Երկրամաս» թերթի խմբագիր
5.	«Թուրքիայի հայ բողոքական և կաթոլիկ համայնքները» թեմայով սեմինար	Արեստակես Միմավորյան, Վահրամ Հովյան
6.	«Չեխական հետազոտական կենտրոնները» թեմայով սեմինար, գործուղման արդյունքների ամփոփում	Սևակ Սարուխանյան
7.	«Հայության կազմակերպման խնդիրները» թեմայով սեմինար	Անուշավան Դանիելյան, Գագիկ Հարությունյան և այլք
8.	«Հունգարիայի կաթոլիկ հայ համայնքը» թեմայով սեմինար	Բենեդեկ Ժիգմունդ, Բուդապեշտի համալսարան
9.	«Ադրբեջանական ինքնության և ինքնաներկայացման հարցերի շուրջ» թեմայով սեմինար	Մոնա Մանուսյան
10.	«Նորավանք» ԳԿՀ 2010թ. առաջին կիսամյակի աշխատանքային արդյունքները» թեմայով սեմինար	Տիգրան Հարությունյան, Սևակ Սարուխանյան, Արեստակես Միմավորյան, Լուսինե Բաղդասյան,
11.	«Հարավկովկասյան հասարակությունների էթնոմշակութային գործընթացների համեմատական մաթեմատիկական մոդելները» թեմայով սեմինար	Մամվել Մանուկյան, սոցիոլոգ
12.	«Արևմտահայության կազմակերպման արդի խնդիրները» գիտաժողով	Անուշավան Դանիելյան, Գագիկ Հարությունյան, Աշոտ Մելքոնյան

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
13.	«Աղբբեջանի հակահայկական քարոզչությունը» թեմայով սեմինար	Վարուժան Գեղամյան
14.	«Գ. Գյուլբենկյան հաստատության հայկական բաժնի աշխատանքները» թեմայով սեմինար	Զավեն Եկավյան, «Գ. Գյուլբենկյան հաստատության» հայկական բաժնի տնօրեն
15.	«Հայության խնդիրները Մերձավոր և Միջին Արևելքում» թեմայով սեմինար	Տիգրան Եկավյան
16.	«Ազգային անվտանգության հիմնախնդիրները» Ամառային դպրոցի արդյունքերի ամփոփում» թեմայով գիտաժողով-քննարկում	Գագիկ Հարությունյան
17.	«Անվտանգության հարցերի ուսումնասիրության եվրոպական կենտրոն» թեմայով սեմինար, գործուղման արդյունքների ամփոփում	Մերգեյ Սարգսյան
18.	«Չինաստանի տարածաշրջանի քաղաքականությունը և Արևելյան Եվրոպայի երկրների դերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում» թեմայով սեմինար, գործուղման արդյունքների ամփոփում	Մերգեյ Սարգսյան
19.	«ՀՀ ՄՆ և «Նորավանք» ԳԿՀ համատեղ աշխատանքները» թեմայով սեմինար-քննարկում	Գագիկ Հարությունյան
20.	«« Նորավանք» ԳԿՀ 2010 թ.-ի գործունեության ամփոփում, 2011 պլանների ներկայացում» թեմայով գիտաժողով	Գագիկ Հարությունյան Տիգրան Հարությունյան Մևակ Սարուխանյան Լուսինե Բաղրամյան Արեստակես Միմավորյան Աննա Ժամակոչյան

5. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Լուսինե Բաղրամյան

Կենտրոնի նպատակն է իրականացնել հրատարակչական աշխատանքները (պարբերականներ, գրքեր, ժողովածուների հրատարակություններ և այլն), մշակել, տեղակայել, կանոնավոր շահագործել ու նորացնել ԳԿՀ ինտերնետային կայքը, հարստացնել գրադարանը, ապահովել նյութերի արդյունավետ տարածումը շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, ամրապնդել «Նորավանք» ԳԿՀ կապերը շահագրգիռ հաստատությունների և անհատների հետ:

Կենտրոնում ընդգրկված է 8 աշխատակից (Լուսինե Բաղրամյան, Խոնարհիկ Քարաուղլանյան, Գևորգ Հայրապետյան, Լիլիթ Մելիքսեթյան, Ռուզաննա Մանուկյան, Տաթևիկ Քարաուղլանյան, Անահիտ Հարությունյան, Ժանետա Գալստյան):

2010թ. ընթացքում լույս են տեսել՝

1. «21-րդ ԴԱԸ» ամսագիր - 6 համար,
2. «21-й БЕК» ամսագիր - 4 համար,
3. "21st CENTURY" ամսագիր - 2 համար,
4. «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» ամսագիր - 6 համար,
5. «Գլոբուս Ազգային անվտանգություն» ամսագիր - 6 համար,
6. Հայկարամ Նահապետյանի «Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը» գիրքը
7. Կարեն Վերանյանի «Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում» գիրքը
8. «Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները» գիրքը
9. «Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում» գիրքը
10. «Հայ համայնքն ԱՄՆ-ում» գիրքը
11. «Стратегия развития. О некоторых проблемах национальной безопасности» ամառային դպրոցի զեկուցումների ժողովածուն

«Մեր հաղթանակները» քառահատորի III հատորը պատրաստվել է տպագրության:

«Նորավանք» ԳԿՀ ընդհանուր հրատարակությունների թիվը՝

- ամսագրեր՝ 168
- գրքեր՝ 44:

Շահագործման է հանձնվել «Նորավանք» ԳԿՀ նոր կայքը:

«Նորավանք» ԳԿՀ www.noravank.am կայքում զետեղվում են Հիմնադրամի վերլուծական հրապարակումները և հետազոտությունները, ինչպես նաև «Նորավանք»-ի գործունեությանը վերաբերող այլ նյութեր: Ներկայումս www.noravank.am-ը Հայաստանում գործող վերլուծական ամենախոշոր ինտերնետային ռեսուրսն է, որից օգտվում են ավելի քան 80 երկրներում, հիմնականում՝ Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, Ուկրաինա, Գերմանիա, Ֆրանսիա, Ադրբեջան:

Կայքէջում 2010թ. զետեղված նյութերի ընդհանուր թիվը կազմել է՝ **750**, որոնցից հայերեն բաժնում՝ **300**, ռուսերեն բաժնում՝ **272**, անգլերեն բաժնում՝ **178**: Ընդհանուր առմամբ կայքէջում զետեղված նյութերի թիվն է՝ **3183** (2010թ.՝ 750, 2009թ.՝ 732, 2008թ.՝ 610,

2007թ.՝ 477, 2006թ.՝ 414, 2005թ.՝ 200), որոնցից վերլուծական բնույթի նյութերի քանակը կազմում է **2342**:

2010թ. ընթացքում ապահովվել է կայքէջում զետեղված բոլոր նյութերի (հայերեն, անգլերեն, ռուսերեն) առաքումը բաժանորդներին: Բաժանորդագրվել է 1029 այցելու (հայերեն – 640, ռուսերեն – 649, անգլերեն - 518):

2010թ. կայքէջի այցելուների ընդհանուր թիվը կազմում է **138.750**: Միջին այցելությունների քանակը կայքէջ 2010թ. կազմել է **օրական 380 հոգի**, որը 1,3 անգամ ավելին է, քան 2009թ. (օրական 300 հոգի), 2,2 անգամ ավելին է, քան 2008թ. (օրական 172 հոգի) և 4,3 անգամ ավելին, քան 2007թ. (օրական 88 հոգի):

2011թ. նախատեսվում է հրատարակել՝ «21-րդ ԴԱԸ» - 6 համար, «21-й Век» - 4 համար, “21-st Century” - 2 համար, «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» - 6 համար, «Գլոբուս Ազգային անվտանգություն» - 6 համար, «Մեր հաղթանակները» քառահատորի 4-րդ հատորը և, համաձայն նախապես հաստատված ծրագրերի, 2 հիմնարար հետազոտություններ՝ գրքերի տեսքով:

6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2010թ. ընթացքում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովման» ծրագրով կատարվել են հետևյալ աշխատանքները:

Տարեսկզբին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կառուցվածքին համապատասխան իրականացվել է նոր ծրագրերի և կենտրոնների 2010թ. գործունեության ուղղությունների, հաստիքների և աշխատողների վարձատրության սահմանում: Դրա հիման վրա իրականացվել են աշխատանքային անձնակազմի հետ համապատասխան պայմանագրային փոփոխությունների հրամանագրումը և համապատասխան աշխատանքային պայմանագրերի փոփոխությունների կնքումը, որի համար կատարվել է **40** աշխատանքային պայմանագրերի փոփոխություն, որոնք գրանցվել են աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աշխատանքների 2010թ. ծրագրերի ապահովման նպատակով կազմվել են շուրջ **115** հրամաններ, գիտական և ստեղծագործական աշխատանքների շուրջ **150** պայմանագրեր, անձնական գործեր, որոնց արդյունքում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը 2010թ. ընթացքում իրականացրել է բնականոն գործունեությունը:

Տարեսկզբին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի քննարկումների արդյունքում պայմանագիր է կնքվել ՀՀ կառավարության աշխատակազմի հետ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների համար՝ հաշվի առնելով սեփական գործունեությունից ստացվող այլ եկամուտները:

2010թ. ընթացքում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը ձեռք է բերել **1831** հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ, այդ թվում սարքավորումներ **1069** հազ. դրամի, կահույք **416** հազ. դրամի, նյութեր և այլ ապրանքներ, կատարվել են **3283** հազ. դրամի կոմունալ ծախսեր:

2010թ. ընթացքում պահպանվել են նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պահպանման անհրաժեշտ նյութաձախսի նորմաները:

Կանոնակարգվել են նաև համակարգչային տեխնիկայի օգտագործման, դուրսգրման հետ կապված աշխատանքները:

Ներկայացվել են նաև ծրագրերի ղեկավարների ամենամսյա նյութաձախսի հաշվետվությունները՝ ծրագրերի գծով ծախսված նյութական արժեքների վերաբերյալ:

Շարունակվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պատվիրված գիտական աշխատանքների, հոդվածների, գրախոսությունների և նմանատիպ այլ նյութերի՝ ըստ ուղղությունների համակարգման, խմբավորման և արխիվացման աշխատանքներ: Ապահովվել են «Նորավանք» ԳԿՀ-ի հետ կնքված պայմանագրերի, ստացած գիտական նյութերի գրանցման մատյանների վարման աշխատանքները:

Կնքվել և վերակնքվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից հրատարակվող «21-րդ ԴԱԸ» ամսագրերի բաժանորդագրության պայմանագրերը, մասնավորապես ՀՀ Կենտրոնական բանկի, «ՀայԴուրսագարդ» ՓԲԸ-ի և «Հայամուլի» հետ և այլն:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամում կազմակերպվել է 18 սեմինար, ինչպես նաև գործուղումներ: Ներկայացվել են սեմինարների, կոնֆերանսների և գործուղումների կազմակերպման զեկուցագիր-առաջարկներ, համապատասխան հրամաններ, կատարվել են սեմինարների և կոնֆերանսների անցկացման հետ կապված գնումներ, կազմվել են համապատասխան արձանագրություններ, հաշվետվություններ, ակտեր, բաշխման ցուցակներ, իրականացվել է ամսագրերի և տեղեկագրերի բաշխում, պատրաստվել են զեկուցագրեր, լիազորագրեր, ծանուցումներ, նյութական ապրանքների ձեռքբերման ամենամսյա հաշվետվություններ, գրանցվել են էլքի, մուտքի, ստացված փաստաթղթերի, աշխատանքային և այլ պայմանագրերի մատյաններ և հրամանագիրք:

2010թ. 1-ին եռամսյակում «Նորավանք» ԳԿՀ աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման նպատակով 1-ին հարկի սենյակներից մեկը կահավորվել է որպես ճաշարան՝ ընդմիջումները կազմակերպելու համար:

Մշտապես ուշադրության կենտրոնում են եղել լուսավորության, ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, հեռախոսի համակարգերը: Մասնավորապես, մշտապես փոփոխվել են այրված լամպերը, մաքրվել են կոյուղագծերը, վերացվել են ջեռուցման համակարգի վթարները:

Ուշադրության կենտրոնում է եղել նաև «Նորավանք» ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղում գտնվող գիտաուսումնական համալիրը: 2010թ. ընթացքում մի շարք այցելություններ են կատարվել Ամաղու գյուղի տարածք: Ամբողջությամբ ավարտվել և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն է ներկայացվել ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին որպես կամավոր ներդրում գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 25-ի N 1825-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1100-Ն որոշմամբ նախատեսված ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի գյուղական համայնքի վարչական սահմանում գտնվող նախկին Ամաղու գյուղի զբաղեցրած 25,39 հեկտար հողամասը և նրա վրա գտնվող Ամաղու գյուղի նախկին մշակույթի տան շենքը և շինությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին հանձնելու աշխատանքները, և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 22.09.2010թ. «Նորավանք» ԳԿՀ-ին տրվել է N 2777312 սեփականության վկայականը: Սեփականության գրանցումից հետո «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով կատարվել է Ամաղու գյուղի շենքի, շինությունների և հողամասի փաստացի վիճակի գույքագրում, կազմվել է համապատասխան ակտ: Այդտեղ աշխատանքի է ընդունվել պահակ-նյութական պատասխանատու, որին հանձնման-ընդունման ակտով հանձնվել են նշված շենքը, շինությունները և հողամասը:

Ամաղու գյուղի շենքի, շինությունների և հողամասի հետ կապված աշխատանքների (հանձնում-ընդունում, էլ.էներգիայի պայմանագիր, ջրամատակարարում) կատարման, ինչպես նաև տեղում փաստացի իրավիճակին տեղեկանալու համար «Նորավանք» ԳԿՀ-ի մի շարք աշխատակիցներ բազմիցս այցելել են Վայոց ձորի Արենի գյուղական համայնքի վարչական սահմանում գտնվող նախկին Ամաղու գյուղի շենք, շինություններ և հողամաս:

Ամաղուի նշված համալիրի պահպանման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք նախատեսված չեն «Նորավանք» ԳԿՀ-ի ֆինանսական հատկացումներում:

Մեր նախնական հաշվարկով «Նորավանք» ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող «Նորավանք» ԳԿՀ-ին հանձնված շենքը, շինությունները և հողամասն օգտագործելու և պահպանելու համար նվազագույն հաշվարկներով տարեկան անհրաժեշտ կլինի շուրջ **10,0** մլն դրամ, որից՝

- շուրջ **6,0** մլն դրամ նոր ձևավորվող հաստիքներով աշխատողների համար՝ ըստ նախատեսված հաշվարկների անհրաժեշտ է Ամաղու գյուղի շենքի պարետ – 1, պահակ – 3, հավաքարար – 2, հնոցապան – 2,
- շուրջ **1,5** մլն դրամ ձմռանը ջեռուցման ծախսերի համար (կաթսայատան աշխատելու պայմանով),
- շուրջ **0,5** մլն դրամ տարեկան գույքահարկի վճարման համար,
- շուրջ **2,0** մլն դրամ վառելանյութ, տնտեսական և այլ նյութեր ձեռք բերելու համար:

Անհրաժեշտ է նշված շենքը և շինությունները կահավորել, որի համար, ըստ նախնական հաշվարկի, անհրաժեշտ է **12,0** մլն դրամ, այդ թվում՝

- կահույքի (սեղաններ, աթոռներ, պահարաններ և այլն) ձեռքբերման ծախսեր **5,0** մլն դրամ,
- սարքավորումների (համակարգիչներ, հեռախոսներ, հեռուստացույցներ և այլն) ձեռքբերման ծախսեր **5,0** մլն դրամ,
- տնտեսական գույքի ձեռքբերման ծախսեր **2,0** մլն դրամ:

Անհրաժեշտ է նաև ձեռք բերել համապատասխան տրանսպորտային միջոց շուրջ **8,0** մլն դրամի:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև ըստ ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքի (ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը Ամադու գյուղի տարածքում գտնվող շենքի, շինությունների վերանորոգման պատվիրատուն է) մասին. Վայոց ձորի մարզի Ամադու գյուղի տարածքում գտնվող «Նորավանք» ԳԿՀ-ին հանձնված շենքի, շինությունների վերանորոգման՝ ըստ 2006թ. կազմած նախահաշվային փաստաթղթերի, նախահաշվային արժեքը կազմում է 181,15 մլն դրամ:

Շինարարական աշխատանքներն սկսվել են 2007թ.: 2007թ. ընթացքում իրականացվել է 50,0 մլն դրամի հիմնանորոգման աշխատանք:

2008թ. պետական բյուջեով իրականացվել է 25,0 մլն դրամ գումարի հիմնանորոգման աշխատանք:

2009թ. պետական բյուջեով իրականացվել է 10,81 մլն դրամի հիմնանորոգման աշխատանք:

2010թ. պետական բյուջեով նախատեսված է իրականացնել 20,344 մլն դրամի հիմնանորոգման աշխատանք:

Մնացորդային նախահաշվային արժեքը կազմում է 74,996 մլն դրամ:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են «ԶԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից, իսկ հիմնանորոգման աշխատանքներն իրականացվում են «Ջերմուկշին» ԲԲԸ-ի կողմից:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխան շարունակվել է աշխատողների հետ կնքված պայմանագրերի գրանցման գրքի, ինչպես նաև հրամանների գրանցամատյանների վարումը, իսկ 2010թ. օգոստոսի 7-ից ՀՀ Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունից հետո կիրառության մեջ է դրվել ներքին իրավական ակտերի ընդունման մեխանիզմը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվետվություններ են ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմին, ինչպես նաև հարկային, պետական սոցիալական ապահովագրության մարմիններին և համայնքներին, իսկ Ամադու գյուղի համար՝ նաև Վայոց ձորի մարզի Արենի գյուղապետարանին:

Կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմին են ներկայացվել նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2011-2013թթ. բյուջետային միջնաժամկետ ծախսային ծրագիրը և «Նորավանք» ԳԿՀ 2011թ. բյուջետային հայտը:

Հոգաբարձուների խորհրդի 2010թ. արդյունքների վերաբերյալ հաշվետվության քննարկման ժամանակ պետք է քննարկվի նաև «Նորավանք» ԳԿՀ-ի նոր հաստիքացուցակը:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեությունն ապահովող բոլոր օղակները, այդ թվում՝ հաշվապահությունը, մատակարարումը, կոմունալ սպասարկումը, աշխատել են արդյունավետ՝ ապահովելով անխափան գործունեություն:

Շարունակվել է այցելուների հաշվառման մատյանի վարումը:

Իրականացվել է «Նորավանք» ԳԿՀ 2009թ. գործունեության աուդիտը՝ «Հայաուդիտ» ՍՊԸ աուդիտորական կազմակերպության կողմից, որի արդյունքում կազմվել են աուդիտորական եզրակացություն և հաշվետվություն:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Գոլոս Արմենիի» օրաթերթում հրապարակվել են «Հիմնադրամի մասին» ՀՀ օրենքով պահանջվող «Նորավանք» ԳԿՀ-ի գործունեության

մասին 2009թ. հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը, որի մասին գրավոր տեղեկացվել է նաև ՀՀ Արդարադատության նախարարությունը:

Կցվում է «Նորավանք» ԳԿՀ 2010թ. ընթացքում ստացված դրամական միջոցների և կատարված ծախսերի մեծությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ աղյուսակի տեսքով:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել մի հարցի վրա, որը, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունի «Նորավանք» ԳԿՀ գործունեության համար:

Հոգաբարձուների խորհրդին խնդրում ենք նաև թույլատրել 2010թ. հաշվետու տարվա համար աուդիտ չանցկացնել, գումարի տնտեսման նպատակով, կամ «Նորավանք» ԳԿՀ-ին հատկացնել շուրջ 800,0 հազ. դրամ 2010թ. հաշվետու տարվա աուդիտն անցկացնելու համար:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջարկում ենք հիմնադրել Հայկական հետազոտությունների ցանցային ինստիտուտ (*Armenian Research Network Institute - ARNI*), որը, հիմնականում հենվելով Հայության մտավոր ռեսուրսների վրա, կմշակի գիտական կենտրոնի առաջադրած ակտուալ թեմաները, կիրականացնի ռազմավարական մշակումներ և կանխատեսումներ, կիրատարակի դրանք տարեգրքի տեսքով և կկազմակերպի

տարեկան գիտաժողովներ: Յանցային ինստիտուտի ստեղծման համար առաջարկում ենք, որ «Նորավանք» ԳԿՀ-ն հանդես գա որպես դրա հիմնադիր և օգտագործի իր ռեսուրսները՝ Ամադուի տարածքը, ինչպես նաև Հիմնադրամի այլ տարածքները (ենթադրվում է վերանորոգել շենքի 5-րդ հարկը) ինստիտուտի ստեղծման և գործունեության ապահովման համար:

2. Ամադուի տարածքում գտնվող և «Նորավանքին» պատկանող շենքի պահպանման և հարակից տարածքի բարեկարգման ծախսերը զգալի են, դրանք իրականացնելու համար հիմնադրամին անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ 6 մլն ՀՀ դրամի չափով:
3. «Մեր հաղթանակները» քառահատորի 3-րդ հատորը պատրաստ է տպագրման, որն իրականացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ՝ 3 մլն դրամի չափով:
4. Վայոց ձորի մարզի Ամադու գյուղի տարածքում գտնվող «Նորավանք» ԳԿՀ-ին հանձնված շենքի հարակից տարածքի մոտ 25 հեկտար տարածքն ունի բարեկարգման կարիք, առաջին հերթին՝ ծառատունկի: Այս և այլ նման աշխատանքներ իրականացնելու համար «Նորավանք» հիմնադրամին անհրաժեշտ է ստանալ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու թույլտվություն:
5. «Նորավանք» ԳԿՀ կանոնադրության 30-րդ կետով նախատեսված է, որ Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Առաջարկում ենք կանոնադրության 30-րդ կետի երրորդ նախադասության մեջ «առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ» բառերը փոխարինել «առնվազն յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ հաշվետու տարվա ավարտից հետո» բառերով:
6. Նկատի ունենալով, որ «Նորավանք» ԳԿՀ-ի նախորդ տարիների, մասնավորապես 2008թ. գործունեության արդյունքներն աուդիտի է ենթարկվել «Աուդիտ-Սթար» ՍՊԸ-ի, իսկ 2009թ. գործունեության արդյունքները՝ «Հայաուդիտ» ՍՊԸ-ի կողմից, որոնք որևէ էական սխալ չեն արձանագրել և, բացի այդ, 2010թ. ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացվել է ստուգում, խնդրում ենք թույլատրել չիրականացնել «Նորավանք» ԳԿՀ-ի 2010թ. գործունեության արդյունքների աուդիտ՝ գումարների (800.000-ից մինչև 1.000.000 դրամ) տնտեսման նպատակով:

Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները (91)

«Նորավանք» ԳԿՀ աշխատակիցների կողմից (74)

Գրքեր (2)

1. Ռուբեն Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010թ., 184 էջ:
2. Ռուբեն Մելքոնյան, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010թ., 104 էջ:

Հոդվածներ (74)

1. Ռուբեն Մելքոնյան, Պոլսո Հայոց պատրիարքարանի վերաբերմունքը բռնի իսլամացված հայերի խնդրին, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010թ., թիվ 1:
2. Ռուբեն Մելքոնյան, Պոլսո հայ համայնքը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010թ., թիվ 3:
3. Ռուբեն Մելքոնյան, Անդրադարձ Դերսիմի հայության պատմության և արդի խնդիրներին, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2010թ., թիվ 5:
4. Ռուբեն Մելքոնյան, Պոլսո հայոց պատրիարքարանը և բռնի իսլամացված հայերի խնդիրը, Հանրապետական, 2010թ., թիվ 1:
5. Ռուբեն Մելքոնյան, Պոլսահայ համայնքի արդի խնդիրների մասին, Հանրապետական, 2010թ., թիվ 2:
6. Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդրի ընկալման շուրջ, Հանրապետական, 2010թ., թիվ 3:
7. Ռուբեն Մելքոնյան, Պոլսահայ համայնքը նոր մարտահրավերների առաջ, Հանրապետական, 2010թ., թիվ 4:
8. Ռուբեն Մելքոնյան, Կրոնափոխ հայերի սերունդները Եվրոպայում, Հանրապետական, 2010թ., թիվ 5:
9. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիայի ներքաղաքական զարգացումների շուրջ, Հանրապետական, 2010թ., թիվ 6:
10. Ռուբեն Մելքոնյան, Պոլսո հայոց պատրիարքության ներկա վիճակի մասին, Հանրապետական, 2010թ., թիվ 7:
11. Ռուբեն Մելքոնյան, Դերսիմի Հայության մասին, Հանրապետական, 2010թ., թիվ 8:
12. Ռուբեն Մելքոնյան, Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցին և հայկական ինքնության խնդիրները, 2010թ., թիվ 9:
13. Ռուբեն Մելքոնյան, Հայաստան-Թուրքիա. թուրքական քաղաքականության որոշ միտումներ, Հանրապետական, 2010թ., թիվ 10:
14. Ռուբեն Մելքոնյան, Մինե Թուղուք. «Թուրքիայում հայկական արմատներին վերադարձողների թիվն աճում է», թարգմանություն, Հանրապետական, 2010թ., թիվ 11:
15. Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդրի ընկալումները Հայաստանում. շահարկումներ և իրականություն, 21-րդ ԴԱԸ, 2010թ., թիվ 6:
16. Рубен Мелконян, О некоторых проблемах армянского меньшинства в Турции, 21-й век, 2010, № 4.
17. Ռուբեն Մելքոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, Ակադեմիկոս Վ.Գորդլիսկին Օսմանյան կայսրության բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, 2009թ., թիվ 6:

